



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՑԱԿ



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը՝ տեղեկությունների
տրամադրման հարցում

ՎԱՆԱԶՈՐ
2021

Հեղինակ՝ Հայկ Հակոբյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Տեղեկատվության ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, իսկ պետական իշխանության մարմինների վարքագիծը վերահսկելու և ժողովրդավարական պետության կառավարմանը լիարժեք մասնակցելու

հնարավորություն ունենալու համար կարևոր է, որ մարդկանց հասանելի լինի պետական մարմինների տրամադրության տակ առկա տեղեկատվությունը, այդ թվում՝ ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկատվությունը: Տեղեկատվության ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը մարդու համար էապես կոթվարացնի նաև այլ իրավունքների իրականացումը. սերտորեն առնչվելով հասարակական կյանքի ոլորտներին՝ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացումը նախադրյալներ է ստեղծում մարդու այլ հիմնական իրավունքների իրականացման համար: Ի հավաստումն վերոգրյալի՝ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում, ընդունվել են տեղեկատվության ազատության վերաբերյալ իրավական ակտեր («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք), տեղեկատվության ազատության իրավունքն ամրագրվել է ՀՀ Սահմանադրությամբ (42-րդ եւ 51-րդ հոդվածներ), միջազգային իրավական ակտերում: Տեղեկատվության ազատության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: Հայաստանը՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթեր: Դրանով իսկ Հայաստանը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքները:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ Կազմակերպություն), կարևորելով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը և այն հանգամանքը, որ հանրային նշանակություն ունեցող տեղեկություններ ստանալու միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը, իր գործունեության շրջանակներում շարունակելով զբաղվել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությամբ, տեղեկություններ

տրամադրելու հարցով պարբերաբար դիմում է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ՝ ՀՀ ՊՆ): Ներկայացվող տեղեկանքում անդրադառնում ենք ՀՀ ՊՆ-ի վարքագծին՝ մարդու իրավունքներին վերաբերող տեղեկությունների տրամադրման ժամանակ, «Ազգային անվտանգության և տեղեկատվության իրավունքի միջազգային սկզբունքներ»¹-ի (այսուհետ՝ Ցվանեի սկզբունքներ) համատեքստում: Ցվանեի սկզբունքների հիմքում ընկած են միջազգային և ազգային օրենքները, չափանիշները, լավագույն փորձը և փորձագետների եզրակացությունները: Ցվանեի սկզբունքներն ավելի շատ վերաբերում են տեղեկատվության ազատության սահմանափակումներին՝ ժողովրդավարական պետության անվտանգության ապահովման տեսակետից: Տեղեկատվության հասանելիությունը սահմանափակելու համար պետության կողմից վկայակոչված բոլոր մյուս հիմքերը պետք է առնվազն համապատասխանեն այս չափանիշներին:

Հարկ է նշել, որ ՀՀ ՊՆ-ն պահանջվող տեղեկությունների տրամադրումը մերժում է անվտանգության հիմքով գաղտնիության այնպիսի մակարդակ, որոնք չունեն որևէ հիմնավորում Ցվանեի սկզբունքների տեսակետից:

Ստորև տեղադրված աղյուսակում կարելի է տեսնել Կազմակերպության կողմից 2021 թ. ՀՀ ՊՆ -ին տեղեկությունների տրամադրելու մասին հարցումների բովանդակությունը և դրանց տրամադրումը մերժելու մասին ՀՀ ՊՆ-ի կողմից վկայակոչված իրավական հիմքերը.

Հ/Հ	Հայցվող տեղեկությունը	Տեղեկության տրամադրումը մերժելու իրավական հիմքը
1.	2020 թ. երկրորդ կիսամյակում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ հարցում	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված
2.	Պատերազմի հետևանքով մահացած (ճանաչված և	«Տեղեկատվության

¹ «Ցվանեի սկզբունքներ», մշակվել են Ցվանեում (Հարավային Աֆրիկա), հրապարակվել են 2013թ. հունիսի 12-ին <http://archive.hcav.am/publications/the-tshwane-principles/> /թարգմանվել է ՀԲԱ Վանաձորի գրասենյակի կողմից/:

	ճանաչման փուլում գտնվող), վիրավոր, անհայտ կորած անձանց, գերիների վերաբերյալ հարցում	ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված, «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենք
3.	ՀՀ ՊՆ-ում իգական սեռի աշխատակիցների թվի վերաբերյալ հարցում	«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված
4.	2021 թ. առաջին կիսամյակում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ հարցում	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված, «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենք
5.	Անհայտ կորածների վերաբերյալ հարցում	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված, «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենք
6.	Մարտական հերթափոխի իրականացման վերաբերյալ հարցում	«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված
7.	Վարժական հավաքների ժամանակ ամրագրված քաղաքացիների վերաբերյալ հարցում	ՀՀ կառավարության 28.09.2020 թ. N 1590-ՆԳ, 05.10.2020 թ. N 1637-ՆԳ, 10.10.2020 թ. N 1669-ՆԳ, 03.11.2020 թ. N 1765-ՆԳ որոշումներ

Ինչպես տեսնում ենք, ՀՀ ՊՆ-ն, մերժելով Կազմակերպության կողմից հայցվող տեղեկությունների տրամադրումը, որպես իրավական հիմք հիմնականում նշում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը և «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքը (ընդ որում, վերջինս՝ առանց որևէ կոնկրետ իրավանորմ մեջբերելու): Միաժամանակ, աղյուսակում կարելի է տեսնել, որ Կազմակերպությունը ՀՀ ՊՆ-ից պահանջում է տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք իրենց բնույթով վերաբերում են հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկություններին՝

մարդու իրավունքներին, գենդերային հավասարությանը: Այսինքն, ՀՀ ՊՆ-ն մերժում է Կազմակերպությանը տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք ուղղակի վերաբերվում են մարդու իրավունքներին և որոնց տրամադրումը հետապնդում է գերակա հանրային շահ:

Ցվաների սկզբունքների 3-րդ կետը անդրադառնալով ազգային անվտանգության ապահովման հիմքով տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակման հիմնավորմանը, սահմանում է, որ “Տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության հիմքով միայն այն դեպքում, եթե կառավարությունը կարողանա ապացուցել, որ՝ 1) սահմանափակումը՝ ա) նախատեսված է օրենքով, և բ) անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում գ) ազգային անվտանգության օրինաչափ շահերը պաշտպանելու համար, և 2) օրենքով սահմանված են պատշաճ երաշխիքներ չարաշահումների դեմ, այդ թվում՝ սահմանափակման հիմնավորվածության անհապաղ, լիարժեք, հասանելի և արդյունավետ ուսումնասիրություն անկախ վերահսկողական մարմնի կողմից և լիարժեք վերանայում դատարանների կողմից”:

4-րդ կետով սահմանում է պետական մարմինների՝ տեղեկատվության հրապարակման ցանկացած սահմանափակման օրինականությունը հաստատելու պարտավորությունը, որի համաձայն՝

ա) տեղեկատվության հրապարակման ցանկացած **սահմանափակման օրինականությունն ապացուցելու պարտավորությունը** դրված է այն պետական մարմնի վրա, որը ձգտում է արգելել տեղեկատվության հրապարակումը:

բ) տեղեկատվություն ստանալու իրավունքը պետք է մեկնաբանվի և կիրառվի լայն իմաստով, իսկ ցանկացած սահմանափակում պետք է մեկնաբանվի նեղ իմաստով:

գ) այս պարտավորությունը կատարելու համար բավարար չէ, որպեսզի պետական մարմինը պարզապես պնդի, որ առկա է վնասի ռիսկ. պետական մարմինը պարտավոր է իր պնդումները հաստատել հստակ և հիմնավոր պատճառներով:

դ) **փաստերով չհիմնավորված պնդումը**, օրինակ՝ նախարարի կամ այլ պաշտոնատար անձի կողմից տրամադրված վկայագիրը այն մասին, որ տեղեկատվության հրապարակումը վնաս կհասցնի ազգային անվտանգությանը, **ոչ մի դեպքում չի կարող այս առումով սպառիչ հիմք համարվել:**

Անդրադառնալով տեղեկատվության հարցումները քննելու կանոններին, հարկ է նշել, որ Ցվանեի սկզբունքները պարունակում են դրանց վերաբերյալ առանձին կարգավորումներ: Այսպես, 18-րդ կետով տեղեկատվությունը տնօրինողի համար սահմանում է անգամ գաղտնիացված տեղեկատվության հարցումները քննելու պարտականություն՝ Տեղեկատվության գաղտնիացված լինելու հանգամանքը վճռորոշ դեր չի խաղում այդ տեղեկատվության հարցմանը պատասխանելու գործում: **Տեղեկատվությունը տնօրինող պետական մարմինը պետք է նման հարցումները քննի այս Սկզբունքներին համապատասխան:**

20-րդ կետով տեղեկատվություն տնօրինողի համար սահմանում է մերժման պատճառները գրավոր ներկայացնելու պարտականություն՝

ա) տեղեկատվության հարցումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում պետական մարմինը պետք է հարցումներին պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետում գրավոր ներկայացնի **մերժման հստակ պատճառները՝** 3-րդ և 9-րդ սկզբունքներին համապատասխան:

բ) **պետական մարմինը հարցման հեղինակին պետք է նաև բավարար տեղեկություններ տրամադրի տեղեկատվության հրապարակման արգելքի և այդ գործընթացը հաստատած պաշտոնյայի (պաշտոնյաների) մասին՝** բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկատվության տրամադրման արդյունքում կբացահայտվի գաղտնի տեղեկատվությունը, և բողոքարկման միջոցները, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել, թե արդյոք պետական մարմինները գործում են օրենքին համապատասխան:

Համաձայն 23-րդ սկզբունքի՝ **Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում այն տնօրինող պետական մարմինը պետք է հնարավորինս հստակ նկարագրի այդ տեղեկատվությունը:** Պետական մարմինը պետք է առնվազն հայտնի նման տեղեկատվության ծավալը, օրինակ՝ էջերի քանակի հաշվարկով:

Իսկ 26-րդ կետով, անդրադառնալով տեղեկատվությունը չտրամադրելու մասին որոշումը վերանայելու իրավունքին, սահմանում է հետևյալը՝

ա) տեղեկատվություն հարցում ներկայացրած անձն իրավունք ունի դիմելու տեղեկատվությունը տրամադրելու մերժումը կամ հարցման հետ կապված հարցերն **անկախ մարմնի կողմից** արագ և ոչ մեծ վճարով վերանայելու համար:

բ) **անկախ մարմինը պետք է ունենա արդյունավետ վերանայման համար անհրաժեշտ իրավասությունը և ռեսուրսները, այդ թվում՝ նրան պետք է լիարժեքորեն հասանելի լինեն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, անգամ՝ գաղտնի տեղեկությունները:**

գ) անձը պետք է իրավունք ունենա դիմելու իրավասու դատարան կամ հաշտարար դատարան՝ բոլոր համապատասխան հարցերի անկախ և արդյունավետ վերանայում իրականացնելու հարցով:

դ) եթե դատարանը վճռում է, որ տեղեկատվությունը չտրամադրելու որոշումը հիմնավորված է, այն պետք է հրապարակի փաստերի վրա հիմնված ապացույցներ և իր կատարած գրավոր իրավական վերլուծությունը, բացառությամբ՝ բացառիկ դեպքերի և 3-րդ սկզբունքով սահմանված դեպքերի:

Ինչպես տեսնում ենք մեջբերվածից, տեղեկատվություն չտրամադրելու դեպքում պետական մարմինը ոչ միայն պետք է նշի այն իրավական հիմքը, որից ելնելով վերջինս մերժում է տեղեկատվության տրամադրումը, այլ նաև **պարտավոր է ներկայացնել մերժման հստակ պատճառները, բավարար և հիմնավոր տեղեկություններ՝ տեղեկատվության հրապարակման արգելքի վերաբերյալ, չհրապարակվող տեղեկատվության նկարագրությունը:** Միաժամանակ, **անկախ տեղեկատվության**

չտրամադրումը դատարանում վիճարկելու հնարավորության առկայությունից, օրենքի համաձայն պետք է գործի **անկախ մարմին**, որն իրավասու կլինի անկողմնակալ որոշում ընդունել և վերանայել պետական մարմինների գործողություններն այն դեպքում, երբ վերջիններս կսահմանափակեն տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Այս առումով անդրադառնալով ՀՀ ՊՆ-ի վարքագծին արձանագրում ենք, որ վերջինս, սահմանափակելով տեղեկատվություն ստանալու իրավունքը, բավարարվում է բացառապես տեղեկատվությունը չտրամադրելու իրավական հիմքը նշելով (ինչպես վերը նշվեց, երբեմն նաև առանց կոնկրետ իրավանորմ վկայակոչելու), առանց ներկայացնելու հիմնավոր տեղեկություններ առ այն, թե ի՞նչ պատճառներով չեն տրամադրվում հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկությունները: Ուստի, առաջնորդվելով վերը նշված սկզբունքներով փաստում ենք, որ ՀՀ ՊՆ-ն տեղեկատվություն ստանալու իրավունքը սահմանափակելու դեպքում չի ներկայացնում հստակ և հիմնավոր փաստեր: Ինչ վերաբերում է Ցվանեի սկզբունքների 3-րդ կետով սահմանված անկախ վերահսկողական մարմնի կողմից սահմանափակման հիմնավորվածության վերանայմանը, ապա արձանագրում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում նման արտադական մարմին մինչ այժմ գոյություն չունի, իսկ սահմանափակման հիմնավորվածությունը ստուգվում է միայն դատարան հայցադիմում ներկայացնելու և գործ հարուցելու դեպքում, ինչը, սակայն, բավարար չէ տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակման հիմնավորվածությունը և օրինականությունը ստուգելու համար, քանի որ **վերահսկողության բացակայության պարագայում գաղտնիության պահպանման պրակտիկան հեշտությամբ կրնարձակվի և կծավալվի:**

Ցվանեի սկզբունքները սահմանելով տեղեկատվության հարցումները քննելու կանոնները, սահմանում են նաև այն տեղեկությունները, որոնք կարող են չհրապարակվել ազգային անվտանգության հիմքով, ինչպես նաև հրապարակման ենթակա տեղեկությունները: Մասնավորապես, 9-րդ կետով սահմանվում են այն տեղեկությունները, որոնք կարելի է օրինական կարգով չհրապարակել:

Համաձայն նշված սկզբունքի՝

ա) պետական մարմինները կարող են ազգային անվտանգության հիմքով սահմանափակել հանրության՝ տեղեկատվության հասանելիության իրավունքը, սակայն միայն այն դեպքում, եթե նման սահմանափակումները համապատասխանում են այս Սկզբունքների բոլոր մյուս դրույթներին, տեղեկատվությունը տնօրինում են պետական մարմինները, և եթե տեղեկատվությունը դասվում է հետևյալ կարգերից որևէ մեկին:

(i) տեղեկություններ ընթացիկ պաշտպանության ծրագրերի, գործողությունների և կարողությունների մասին այն ժամանակահատվածի կտրվածքով, որի ընթացքում տվյալ տեղեկություններն ունեն գործառնական նշանակություն

(ii) տեղեկություններ արտադրության, կարողությունների, կամ սպառազինության համակարգերի և այլ ռազմական համակարգերի, այդ թվում կապի համակարգերի օգտագործման մասին

(iii) տեղեկություններ պետության տարածքը, կարևորագույն ենթակառուցվածքը կամ կարևորագույն ազգային հաստատությունները (էական հաստատություններ) սպառնալիքներից, ուժի գործադրումից կամ նենգադուլ գործողությունների պաշտպանելու համար ձեռնարկվող հատուկ միջոցառումների մասին, որոնց արդյունավետությունը կախված է գաղտնիությունից

(iv) հետախուզական ծառայությունների գործողություններին, աղբյուրներին և մեթոդներին վերաբերող կամ դրանցից բխող տեղեկություններ, եթե դրանք վերաբերում են ազգային անվտանգության հետ կապված հարցերին, և

(v) ազգային անվտանգության հարցերին վերաբերող տեղեկատվություն, որը տրամադրել է օտարերկրյա պետությունը կամ միջկառավարական մարմինը գաղտնիության պահպանման հստակ ակնկալիքով, և այլ դիվանագիտական հաղորդումներ, եթե դրանք վերաբերում են ազգային անվտանգության հարցերին

բ) լավ գործելակերպ է համարվում, եթե ազգային օրենսդրությամբ սահմանված է տեղեկատվության այնպիսի կարգերի բացառիկ ցանկ, որոնք առնվազն այնքան հստակ են ձևակերպված, որքան վերոնշյալ կարգերը:

գ) պետությունը կարող է տեղեկատվության կարգերի վերոնշյալ ցանկին ավելացնել այլ կարգ, բայց միայն պայմանով, որ այդ կարգը հստակ ճանաչելի է և հստակ սահմանված, և

տեղեկատվության գաղտնիության պահպանումն անհրաժեշտ է օրենքով սահմանված ազգային անվտանգության օրինաչափ շահը պաշտպանելու համար՝ 2-րդ Սկզբունքին համապատասխան: **Որևէ նոր կարգ առաջադրելու դեպքում պետությունը պետք է պարզաբանի, թե ինչպես տվյալ կարգի տեղեկատվության հրապարակումը կարող է վնասել ազգային անվտանգությանը:**

Ինչպես արդեն նշել ենք, Կազմակերպությունը ՀՀ ՊՆ-ից պահանջում է տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք իրենց բնույթով վերաբերում են հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկություններին: Ավելին, պահանջվող տեղեկություններից և ոչ մեկը չեն առնչվում 9-րդ սկզբունքով թվարկված այն տեղեկություններին, որոնք տեղեկությունը տնօրինողի կողմից օրինական կարգով հրապարակման ենթակա չեն:

Այսինքն, Կազմակերպության կողմից հայցվող տեղեկությունները չտրամադրելը չի բխում պաշտպանության ոլորտում պետության գործունեության արդյունավետությունն ապահովելու ՀՀ ՊՆ-ի պարտավորությունների կատարումից, և չեն կարող խոչընդոտել այդ պարտավորությունների կատարմանը, ուստի տեղեկատվության հանրային մատչելիության նման սահմանափակումները ՀՀ ՊՆ-ի կողմից արդարացված չեն:

Իսկ ահա արդեն 10-րդ կետով, որը վերաբերում է տեղեկատվության հրապարակման օգտին նշանակալի կանխավարկածով տեղեկատվության կարգերին կամ գերակա շահ ներկայացնող տեղեկատվության կարգերին, թվարկում է այն տեղեկությունները, որոնց դեպքում գերակա է հանրային շահը և դրանք տեղեկություն տնօրինող պետական մարմնի կողմից ենթակա են հրապարակման:

Որոշ տեղեկություններ, այդ թվում՝ ստորև ներկայացվածները, հատկապես մեծ հանրային շահ են ներկայացնում՝ հաշվի առնելով ժողովրդավարական վերահսկողության գործընթացում և օրենքի գերակայության մասով դրանց հատուկ նշանակությունը: Հետևաբար, շատ հավանական է, իսկ որոշ դեպքերում՝ գերակա հրամայական, որ նման տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հանրությանը և հրապարակվի նախաձեռնողական կերպով:

Նման բնույթի տեղեկությունների հրապարակման օգտին առկա է առնվազն նշանակալի կանխավարկած, և տեղեկատվության հրապարակումը կարող է արգելվել ազգային անվտանգության հիմքով միայն խիստ բացառիկ հանգամանքներում և այլ սկզբունքներին համապատասխան կարգով, միայն խիստ սահմանափակ ժամանակահատվածում, միայն օրենքով նախատեսված կարգով և միայն այն դեպքում, երբ չկա խելամիտ միջոց, որով կարելի է նվազեցնել տեղեկատվության հրապարակման հետ կապված վնասը: **Որպես ըստ էության հանրային գերակա շահի առարկա՝ ստորև ներկայացված որոշ տեղեկությունների հրապարակման արգելքն ազգային անվտանգության հիմքերով ոչ մի դեպքում չի կարող արդարացվել.**

Ա. մարդու իրավունքների միջազգային իրավունքի և մարդասիրական իրավունքի խախտումներ,

Բ. անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի կանխարգելման և կյանքի իրավունքի երաշխիքներ,

Գ. պետական մարմինների կառուցվածքը և լիազորությունները,

Դ. որոշումներ ռազմական ուժ կիրառելու կամ զանգվածային ոչնչացման զենք ձեռքբերելու մասին,

Ե. դիտում,

Զ. ֆինանսական տեղեկատվություն,

Է. հաշվետվողականություն սահմանադրությամբ և օրենքով ամրագրված իրավունքների խախտումների և իշխանության չարաշահման այլ դրսևորումների մասով,

Ը. հանրային առողջապահություն, հանրային անվտանգություն կամ շրջակա միջավայրի պահպանություն:

Ուսումնասիրելով աղյուսակում ներկայացված տեղեկությունները, տեսնում ենք, որ Կազմակերպությունը ՀՀ ՊՆ-ից պահանջում է տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնց դեպքում գերակա է հանրային շահը՝ զինված ուժերում զինձառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկություններ, պատերազմի հետևանքով մահացած վիրավոր, անհայտ կորած անձանց, գերիների վերաբերյալ տեղեկություններ և այլ տեղեկություններ, իսկ **հանրային շահը դառնում է պարտադիր և**

գերակշռում է մյուս շահերի նկատմամբ, եթե տեղեկատվությունը վերաբերում է մարդու իրավունքների խախտմանը կամ մարդկության դեմ հանցագործություններին:

Կազմակերպության կողմից հայցվող տեղեկություններն իրենց բնույթով վերաբերում են մարդու իրավունքների վերաբերյալ խախտումներին և համապատասխանում են այն տեղեկությունների կարգերին, որոնք, համաձայն «Սկզբունքների», տեղեկություն տնօրինող պետական մարմնի կողմից ենթակա են ոչ միայն տրամադրման տեղեկություններ հայցելու դեպքում, այլ նաև ենթակա են հրապարակման նախաձեռնողական կարգով: Մինչդեռ, ՀՀ ՊՆ-ն ոչ միայն չի հրապարակում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկությունները, այլ նաև հրաժարվում է տրամադրել դրանք:

Ամփոփելով վերոգրյալն արձանագրում ենք, որ ՀՀ ՊՆ-ի կողմից տեղեկատվության տրամադրման սահմանափակումը չի բխում միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված հայեցակարգերից՝ տեղեկատվությունը հարցումները ՀՀ ՊՆ-ից չեն քննվում և դրանց վերաբերյալ պատասխանները չեն տրամադրվում Յվանեի սկզբունքներով ամրագրված կանոններին համապատասխան, միաժամանակ, Կազմակերպության կողմից պահանջվող տեղեկություններն իրենց բնույթով չեն հանդիսանում պաշտպանության ենթակա մարդու անձնական կյանքի գաղտնիք հանդիսացող տեղեկություններ. նման տեղեկատվության տրամադրումը վնաս չի պատճառում և չի կարող պատճառել որևէ անձի շահերին, քանի որ դրանք վերաբերում են հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկություններին. մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տրամադրվող տեղեկատվությունը հանդիսանում է տեղեկատվության բացահայտմամբ սպասարկվող հանրային շահի պարտադիր գերակայությունն արդարացնող միջոց:

Միաժամանակ, արձանագրում ենք, որ նման պայմաններում քաղաքացիական վերահսկողությունից դուրս է մնում հանրային իշխանության մարմինների մի կարևոր ոլորտ, ինչն անհամատեղելի է իրավական և ժողովրդավարական հասարակությունում մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության, հաշվետու և թափանցիկ կառավարման երաշխավորման համար պետության վերցրած պարտավորությունների

բովանդակությանը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը, այսինքն հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է:

Առաջարկություններ

Ամփոփելով սույն վերլուծությամբ բացահայտված խնդիրները, առաջարկում ենք՝

1. տեղեկությունները որպես գաղտնիություն դասակարգելու իրավական չափանիշները կիրառել ողջամիտ և շրջահայաց ձևով՝ հնարավորինս մեծ չափով նպաստելով ժողովրդավարական արժեքների և հասարակության առջև թափանցիկության սկզբունքների ապահովմանը:
2. տեղեկություններ տրամադրելու հարցումները քննել և դրանց վերաբերյալ պատասխան տրամադրել Ցվանեի սկզբունքներին համապատասխան, ներկայացնելով ամեն մի տեղեկատվության հարցմամբ պահանջվող տեղեկությունը տրամադրելու կամ մերժելու քննման հիմքերը, և կոնկրետ հիմնավորումները:
3. տեղեկատվությունը տրամադրելը մերժելու դեպքում, բացի իրավական հիմք նշելը, տրամադրել նաև բավարար և հիմնավոր տեղեկություններ՝ տեղեկատվության հրապարակման արգելքի վերաբերյալ՝ ներկայացնելով մերժման հստակ պատճառները և չհրապարակվող տեղեկատվության նկարագրությունը:
4. ստեղծել անկախ վերահսկողական մարմին, որն իրավասու կլինի լիարժեք, արդյունավետ և անկողմնակալ որոշում ընդունելու տեղեկատվության իրավունքը սահմանափակելու վերաբերյալ. անկախ վերահսկողական մարմինը պետք է ունենա արդյունավետ վերանայման համար անհրաժեշտ իրավասություն և ռեսուրսներ, բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, անգամ՝ գաղտնի տեղեկությունները ստանալու և քննության առնելու լիազորություններ:

Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ՝

1. անվտանգության և պաշտպանության ոլորտներում մշակել տեղեկատվության գաղտնիության հնարավորինս հստակ օրենսդրություն՝ սահմանելով չափանիշներ տեղեկատվության՝ որպես գաղտնի դասակարգման համար,
2. տեղեկատվության գաղտնիությունը կարգավորող օրենսդրությունը համապատասխանեցնել տեղեկատվության ազատ հասանելիությանն առնչվող օրենսդրության հետ,
3. ՀՀ-ում տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող իրավական ակտերը համապատասխանեցնել միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների և հայեցակարգերի հետ: